

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված են առկա ստորև նշված խնդիրների լուծմամբ: Մասնավորապես. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհե՝ ՔՕ Նախագիծ) մշակման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության քրեական իրավունքում իրավական որոշակիության ապահովման կարևորագույն նպատակը, քանի որ քրեաիրավական նորմերը պետք է լինեն խիստ որոշակի և բացառեն տարաբնույթ մեկնաբանություններ:

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Քննման, փորձաքննության, բժշկական ստուգման ենթարկվելուց կամ համեմատական հետազոտման համար նմուշներ ներկայացնելուց հրաժարվելու դեպքում քրեական պատասխանատվության նախատեսում.

ՔՕ Նախագծով նախատեսվում է Օրենսգիրքը լրացնել նոր 339.1 հոդվածով, համաձայն որի վկան, տուժողը, կասկածյալը կամ մեղադրյալը քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով օրենքով նախատեսված կարգով քննման, փորձաքննության ենթարկվելուց կամ հետազոտման համար նմուշներ ներկայացնելուց հրաժարվելու դեպքում ենթակա է պատասխանատվության: Վերջինս պայմանավորված է նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ, 63-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ և 4-րդ, 65-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ և 4-րդ, 86-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետերի համաձայն *տուժողը, կասկածյալը, մեղադրյալը և վկան պարտավոր են քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման,*

փորձաքննության և բժշկական ստուգման, մատնադրոշման, լուսանկարման, ինչպես նաև տալ նմուշներ՝ համեմատական հետազոտման համար:

Ստացվում է, որ քրեական վարույթի վերոնշյալ մասնակիցներն օրենքով նախատեսված կարգով կրում են քննման, փորձաքննության ենթարկվելու, ինչպես նաև նմուշներ ներկայացնելու պարտականություն, մինչդեռ նշված պարտականությունները կատարելուց հրաժարվելու դեպքում պատասխանատվություն նախատեսող նորմ առկա չէ:

Միաժամանակ, նախատեսվում է քրեական պատասխանատվությունից ազատելու իրավական ռեժիմ: Այն է՝ քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր հիմք է, եթե *նա նախաքննության ընթացքում՝ մինչև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ կամ որոշում կայացնելը կամավոր ներկայացրել է նմուշները կամ կամավոր ենթարկվել է* քննման, փորձաքննության, բժշկական ստուգման և *ժամանակին ներկայացված* նմուշները *կարող են օգտագործվել (պիտանի են) քրեական գործի լուծման համար:*

Քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր հիմքի կիրառման համար նախատեսված է երկու պայման. նմուշները կամավոր ներկայացնելը և այն ժամանակին ներկայացնելը: Բանն այն է, որ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ անձը օրինակ՝ ալկոհոլ (թմրանյութ) օգտագործած վիճակում նախաքննության սկզբնական հատվածում հրաժարվում է փորձաքննության ենթարկվել կամ հրաժարվում է նմուշներ տրամադրել, մինչդեռ անձը գիտակցում է, որ տվյալ նմուշները մարդու օրգանիզմում պահվում են որոշակի ժամանակահատվածում: Կամ նախաքննության ընթացքում չի թույլատրում մարմնի վրայից համապատասխան հետքեր վերցնել, այն ակնկալիքով, որ հետագայում կարող է դրանք մաքրել կամ լվանալ: Այս պարագայում, անձը, եթե նախապես հրաժարվել է դատավարական պարտականությունը կատարելուց, սակայն հետագայում ցանկություն է հայտնում այդ պարտականությունը կամավոր կատարելու մասին, ապա նա կազատվի քրեական պատասխանատվությունից, եթե նմուշները ուշ ներկայացնելու պատճառով, դրանք չեն կորցրել իրենց ապացուցողական նշանակությունը կամ բացակայել է այն թաքցնելու վտանգը:

Բացի այդ նման նորմ է նախատեսվում նաև արտասահմանյան մի շարք քրեական օրենսգրքերում: Մասնավորապես.

Իսրայելի քրեական օրենսգրքի¹ 241-րդ հոդվածի համաձայն՝ եթե անձը պարտավոր է ցուցմունք տալ կամ ներկայացնել այլ ապացույցներ դատավարության ընթացքում, սակայն հրաժարվում է դա իրականացնելուց, ապա նա պատժվում է ազատազրկմամբ մինչև 2 տարի ժամկետով: Որպես այլ ապացույցներ ներկայացնելուց հրաժարվել է համարվում նաև փորձաքննության համար նմուշներ չտալը:

Լատվիայի քրեական օրենսգրքի² 262.1-րդ հոդվածը վերնագրված է ալկոհոլի, թմրամիջոցի, հոգեմետ նյութի, թունանյութերի կամ այլ թմրեցնող նյութերի հայտնաբերմանն ուղղված փորձաքննություն անցնելուց հրաժարվելը և այդ հոդվածի համաձայն՝ ավտոմեքենայի վարորդը, ով տարվա ընթացքում երկրորդ անգամ է կատարել խախտում և հրաժարվում է ալկոհոլի, թմրամիջոցի, հոգեմետ նյութի, թունանյութի կամ այլ թմրեցնող նյութերի հայտնաբերմանն ուղղված փորձաքննություն անցնել պատժվում է ազատազրկմամբ մինչև 1 տարի ժամկետով, կալանքով կամ հանրային աշխատանքներով, կամ տուգանքով նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից զրկելով 3-ից 5 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:

Ռուսաստանի Ղաշնության քրեական օրենսգրքի³ 308-րդ հոդվածի համաձայն՝ վկայի կամ տուժողի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը կամ տուժողի քննմանը մասնակցելուց հրաժարվելը, նրա նկատմամբ փորձաքննության անցկացումից խուսափելը, այն դեպքում, երբ նրա համաձայնությունը պարտադիր չէ, կամ համեմատական հետազոտության համար ձեռագրի կամ այլ փորձանմուշներ տրամադրելուց հրաժարվելը պատժվում է տուգանքով մինչև քառասուն հազար ռուբլի կամ դատապարտյալի աշխատավարձի կամ այլ եկամուտի չափով մինչև երեք ամիս ժամկետով, կամ հանրային աշխատանքներով մինչև երեք հարյուր վաթսուն ժամ տևողությամբ, կամ ուղղիչ աշխատանքներով առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով առավելագույնը երեք ամիս ժամկետով:

1.1.«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ ՔՂՕ Նախագիծ) առաջարկվում է որպեսզի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) նախատեսվի դրույթ,

¹ <https://www.twirpx.com/file/691498/>

² http://www.pravo.lv/likumi/07_uz.html

³ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/60fe35427754a2f7623e0432ed10d149b8efa79f/

ըստ որի՝ քննման, փորձաքննության, բժշկական ստուգման ենթարկվելու, ինչպես նաև համեմատական հետազոտման համար նմուշներ տալն իրականացվի դատարանի որոշմամբ՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25-րդ հոդվածով սահմանված՝ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունը:

Ընդ որում դատարանի վերահսկողությունը պայմանավորված է ոչ միայն ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի սահմանադրական պաշտպանության, այլ նաև հետազայում այդ գործողությունները չկատարելու համար պատասխանատվության նախատեսմամբ (տե՛ս 4-րդ կետում):

1. Առաջարկվում է, որպեսզի Օրենսգրքի 53-րդ հոդվածում, որը սահմանում է դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում, նախատեսվի դրույթ, ըստ որի՝ ի թիվս, մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով դատարան դիմելու լիազորությունների, դատախազը լիազորված կլինի նաև հարկադրաբար քննում, փորձաքննություն կատարելու կամ նմուշներ ստանալու միջնորդությամբ ևս դիմելու դատարան՝ այն դեպքում, երբ գործող դատավարական օրենքը դատախազին նախատեսում է որպես դատավարական հարկադրանքի միջոց կիրառելու կամ քննչական գործողությունը թույլատրելու մասին դատարան միջնորդություն ներկայացնելու սուբյեկտ:

3. Առաջարկվում է, որպեսզի Օրենսգրքի 55-րդ հոդվածում, որը սահմանում է քննիչի լիազորությունները, նախատեսվի դրույթ, ըստ որի՝ ի թիվս, մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով դատարան դիմելու լիազորությունների, քննիչը լիազորված կլինի նաև հարկադրաբար քննում, փորձաքննություն կատարելու կամ նմուշներ ստանալու միջնորդությամբ ևս դիմելու դատարան:

4. Առաջարկվում է, որպեսզի Օրենսգրքի 57-րդ հոդվածում, որը սահմանում է հետաքննության մարմնի լրագրությունները, լրացնել նոր կետ, ըստ որի՝ հետաքննության

մարմինը հարկադրաբար քննում, փորձաքննություն կատարելու կամ նմուշներ ստանալու միջնորդությամբ կարող է դիմել դատարան:

5. Օրենսգրքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ և 4-րդ, 65-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն կասկածյալը և մեղադրյալը պարտավոր են քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման, փորձաքննության և բժշկական ստուգման, մատնադրոշմման, լուսանկարման, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին ընձեռել հնարավորություն վերցնելու մարմնի արտաթորությունների նմուշներ:

Ստացվում է, որ քրեական վարույթի վերոնշյալ մասնակիցներն օրենքով նախատեսված կարգով կրում են քննման, փորձաքննության և բժշկական ստուգման ենթարկվելու, մատնադրոշմման, լուսանկարման, ինչպես նաև մարմնի արտաթորությունների նմուշներն երկայացնելու պարտականություն, մինչդեռ նշված պարտականությունների շարքում բացակայում է *համեմատական հետազոտման համար այլ նմուշներ երկայացնելու պարտականությունը*:

Հաշվի առնելով, որ համեմատական հետազոտման համար այլ նմուշներ երկայացնելու պարտականություն չնախատեսելն օրենսդրական բաց է, ուստի այն լրացնելու նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում և 65-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում կատարել համապատասխան լրացում՝ մասնավորապես կասկածյալի և մեղադրյալի համար նախատեսելով նաև՝ *«համեմատական հետազոտման համար այլ նմուշներ երկայացնելու» պարտականությունը*, որը բխում է քրեական գործով վարույթի հնարավոր արգելակումը բացառելու օբյեկտիվ անհրաժեշտությունից և որի դեպքում միայն հնարավոր կլինի լուծել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող լրացման կիրարկման ապահովման խնդիրը:

6. Առաջարկվում է Օրենսգրքի 188.1-րդ հոդվածը լրացնել նոր 2.1-րդ մասով, ըստ որի՝ քննման, փորձաքննության ենթարկվելու կամ համեմատական հետազոտման համար նմուշներ տալու պարտականությունը կամովին չկատարելու դեպքում նշված քննչական գործողությունները դատարանի որոշմամբ հարկադրաբար կատարելու մասին, ինչպես նաև կպարզաբանի նշված քննչական գործողությունները կամավոր չկատարելու դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության մասին:

6.1. Առաջարկվում է նախատեսել դրույթ, ըստ որի՝ քննմանը, փորձաքննությանը ենթարկվելուց կամ նմուշներ տալուց հրաժարվելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը կկազմի արձանագրություն, որտեղ կնշվի քննչական գործողություններին մասնակցելու պարտականությունը կատարելուց անձի հրաժարվելու մասին:

Քննումը, փորձաքննությունը կամ նմուշներ վերցնելը հարկադրաբար կկատարվի միայն դատարանի որոշման հիման վրա:

6.2. Առաջարկվում է, որպեսզի վարույթն իրականացնող մարմինը հանձնարարի հետաքննության մարմնի աշխատակցին՝ օրենքով սահմանված կարգով և միջոցներով աջակցելու՝ քննումը, փորձաքննությունը հարկադրաբար կատարելուն կամ նմուշները հարկադրաբար ստանալուն:

Եթե քննումը, փորձաքննությունը կամ նմուշներ վերցնելը հարկադրաբար կատարելն օբյեկտիվորեն անհնար է կամ դրանց իրականացումը կարող է հանգեցնել ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության խախտման, ապա բացառիկ դեպքերում, եթե այլ եղանակներով հնարավոր չէ ապացուցել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները, վարույթն իրականացնող մարմինը հանձնարարում է հետաքննության մարմնին գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական տվյալները ձեռք բերել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Առաջարկվում է Օրենսգրքի 279-րդ հոդվածում, որը սահմանում է դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները, սահմանել դրույթ, ըստ որի՝ ի թիվս այլ քննչական գործողությունների կնախատեսվի նաև դատարանի որոշմամբ քննումը, փորձաքննությունը հարկադրաբար կատարելը կամ նմուշները հարկադրաբար ստանալը, որպես քննչական գործողություն:

7. Առաջարկվում է Օրենսգրքի 283-րդ հոդվածում, որը սահմանում է դատարանի կողմից քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունների քննարկման կարգը, լրացնել նաև հարկադրաբար քննում, փորձաքննություն կատարելու կամ նմուշներ ստանալու վերաբերյալ միջնորդությունների ներկայացումը, որը ինչպես բնակարանի խուզարկության միջնորդությունները կքննարկվեն անհապաղ:

Առաջարկը պայմանավորված է նրանով, որ՝ նմուշներ վերցնելու գործընթացին պետք է աջակցեն հետաքննության մարմինները, քանի որ ո՛չ քննիչը և օրինակ՝ ո՛չ էլ

բժիշկը չունեն հարկադրանքի միջոցներ կիրառելու լիազորություն, որը օրինակ՝ «ՀՀ ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ ունի Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, մասնավորապես՝ ոստիկանության ծառայողը որպես բացառիկ միջոց գործադրում է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ:

Հարկ է նշել, որ համանման նորմ նախատեսված է, օրինակ՝ *Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքում*⁴, որի 111-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ քննչական գործողություններ կատարելիս վիրաբուժական միջոցներ և մեթոդներ կիրառելը կամ բժշկական հետազոտություն իրականացնելը, որոնք առաջացնում են ուժեղ ցավ, թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ տվյալ անձի համաձայնությամբ:

Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե հնարավոր չէ փորձանմուշները վերցնել կամավոր, այն իրականացվում է կողմերի միջնորդության հիմա վրա՝ *դատարանի որոշմամբ*:

Համանման կարգավորում առկա է նաև *Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքում*⁵, որի 245-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե անձը հրաժարվում է կամավոր հանձնել կենսաբանական նմուշներ, ապա քննիչ-դատավորը, կամ քրեական վարույթն իրականացնող անձի միջնորդությամբ՝ *դատավորն իրավունք ունի քննիչին, դատախազին թույլատրել* (կամ նրանց պարտավորեցնել, եթե միջնորդությունը ներկայացրել է պաշտպանության կողմը)՝ *կենսաբանական նմուշները վերցնել հարկադրաբար*:

*Ղազախստանի քրեական դատավարության օրենսգրքում*⁶ տարբերակված են մեղադրյալից և տուժողից (վկայից) փորձանմուշներ վերցնելու դատավարական կարգերը: Այսպես՝ Ղազախստանի քրեական դատավարության օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կասկածյալից, մեղադրյալից նմուշներ կարելի է վերցնել հարկադրաբար: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տուժողից և վկայից նմուշ կարելի է վերցնել միայն նրանց համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նմուշ վերցնելը պահանջում է կասկածյալը, մեղադրյալը՝ իրենց քրեական իրավախախտում կատարելու մեջ մերկացնող ցուցմունքները ստուգելու նպատակով, ինչպես նաև նմուշներ վերցնելու անհրաժեշտությունը պայմանավորված է վեներական կամ այլ վարակիչ

⁴<https://www.matsne.gov.ge/ru/document/download/90034/37/ru/pdf>

⁵<http://kodeksy.com.ua/ka/upku-2012/statja-245.htm>

⁶https://online.zakon.kz/Document/?doc_id=31575852&doc_id2=31575852#activate_doc=2&pos=324;-98&pos2=4173;-101

հիվանդություններն ախտորոշելու համար, եթե մման ախտորոշումը գործի լուծման համար ունի նշանակություն: Նշված դեպքերում տուժողից, վկայից հարկադրաբար մուշներ վերցնելը կատարվում է միայն դատախազի թույլտվությամբ կամ դատարանի որոշմամբ:

Այսպիսով, առաջարկվում է, որպեսզի Օրենսգրքում նախատեսվի դրույթ, ըստ որի՝ հարկադրաբար մուշներ վերցնելու վերաբերյալ միջնորդությունների քննարկումը դատարանի կողմից իրականացվի անհապաղ, քանի որ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ անձն, օրինակ՝ ալկոհոլ (թմրանյութ) օգտագործած վիճակում հրաժարվելու է փորձաքննության ենթարկվելուց կամ հրաժարվելու է մուշներ տրամադրելուց՝ գիտակցելով, որ տվյալ մուշներն իր օրգանիզմում պահվելու են որոշակի ժամանակահատվածում, կամ նախաքննության ընթացքում չի թույլատրելու մարմնի վրայից համապատասխան հետքեր վերցնել, այն ակնկալիքով, որ հետագայում կարող է դրանք մաքրել կամ լվանալ:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության 2017 թվական (սեպտեմբեր) կարծիքի համաձայն՝ մասնավորապես՝ նախագծի 457-րդ հոդվածի (քննման, փորձաքննության, բժշկական ստուգման ենթարկվելուց կամ մուշներ տալուց հրաժարվելը կամ խուսափելը) վերաբերյալ դիրքորոշում է հայտնել, որ հանցագործություն կարող է կատարվել միայն, եթե անձը չի ենթարկվել դատարանի կոնկրետ կարգադրությանը:

Պետք է նշել նաև, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի տեսանկյունից պետությունը մի շարք հանցագործություններով (օրինակ՝ կյանքի, առողջության, սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ, խոշտանգում) կրում է պատշաճ քննություն կատարելու պոզիտիվ պարտականություն: Այս տեսակի հանցագործություններով քննման, փորձաքննության, բժշկական ստուգման, մատնադրոշմման ենթարկվելը, լուսանկարվելը, համեմատական հետազոտման համար մուշներ տալը պատշաճ քննություն կատարելու կարևորագույն, իսկ առանձին դեպքերում նաև՝ միակ միջոցներն են:

2. Առաջարկվող կարգավորման բնույթ.

Նախագծերով առաջարկվում են հստակեցնել քրեական վարույթի մասնակցի կողմից քննման, փորձաքննության ենթարկվելուց կամ նմուշներ ներկայացնելուց հրաժարվելու դեպքում նախատեսվող քրեական պատասխանատվության հարցերը, ինչպես նաև առաջարկվող լրացումներն ուղղված են օրենքի վերը նշված բացերը լրացնելուն՝ իրավակիրառ պրակտիկայում անորոշությունը բացառելու նպատակով, որը բխում է քրեական գործով վարույթի հնարավոր արգելակումը բացառելու օբյեկտիվ անհրաժեշտությունից:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք.

ՀՀ քննչական կոմիտե:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունմամբ իրավական կարգավորում կստանան քննչական պրակտիկայում տեղ գտած մի շարք արարքների քրեականացման և դրանց համար քրեական պատասխանատվության սահմանման հարցերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում՝ քննման, փորձաքննության ենթարկվելու կամ նմուշներ տալու դատավարական պարտականության հարկադիր կատարման վերաբերյալ իրավահարաբերությունների ընթացակարգերը: